

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-1) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

14.10.2019թ.

Հայտատու՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ համայնքապետարան

<<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր՝ 3.1-1/

ա) կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով .

բ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է դրամական միջոցների մուտքագրման, դուրսգրման գործառույթները.

գ) ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.

դ) հետևում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականների՝ համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին.

ե) աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը.

զ) իրականացնում է աշխատակազմի քարտուղարի մոտ ընդունելության համար քաղաքացիների հերթագրումը.

է) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.

ը) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատակազմի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

թ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան.

ժ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

Առաջատար մասնագետի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝

ա) առնվազն միջնակարգ կրթություն.

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Հանրային ծառայության մասին», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Գույքահարկի մասին», «Հողի հարկի մասին», «Եկամտահարկի մասին», «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) անհրաժեշտ տեղեկատվությանը տիրապետելու ունակություն.

դ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- գրավոր դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է դիմումը ներկայացնելիս).
 - համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի կրկնօրինակները բնօրինակների հետ՝ դիպլոմ, վկայական (ներ) :
Ներկայացվող փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում.
 - հայտարարություն այն մասին , որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
 - հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1801- Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, որը հանրային ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը.
 - արական սեռի անձինք՝ զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասային կցագրման վկայականի կրկնօրինակը կամ համապատասխան տեղեկանք՝ <<Համայնքային ծառայության մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի <<ե>> կետի պահանջը բավարարելու նպատակով .
 - մեկ լուսանկար 3x4 չափսի.
 - անձնագիր / նույնականացման քարտ/:
- Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են Շահումյանի թ/Ֆ համայնքապետարանում և Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությունում, ամեն օր ժամը 9:00 -18:00՝ բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Շահումյանի թ/Ֆ համայնքապետարանի աշխատակազմ (գ. Շահումյանի թ/Ֆ , հեռ. 044 84 08 08) և Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (ք. Արմավիր, Արովյան 71, հեռ. 0237- 2-76-48, 2-07-70):

Մրցույթը կկայանա 2019 թվականի նոյեմբերի 15-ին, ժամը 12:00-ին Շահումյանի թ/ֆ համայնքապետարանում:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2019 թվականի հոկտեմբերի 31-ը, ժամը 18:00 :

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն

Արմավիրի մարզ

Շահումյանի թ/ֆ

4-րդ փողոց, 1-ին փակուղի 1

Էլ. հասցե՝ shahumyantf.armavir@mta.gov.am